

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՀՈՈՄԻ ԵՒ ՊԱՐԹԵՒՍՏԱՆԻ ԴԵՄ»

Ռ. ՄԱՆԱՍԵՐԵԱՆ

«Հայաստան» Հրտ., Երևան, 1987

Հայոց պատմութեան մէջ շատ են դէպքերն ու դէմքերը որոնք կարիքը ունին վերազնահատումի, երբեմն՝ վերարժեւորումի, յաճախ՝ ծանօթացումի, ոչ միայն ժամանակակից շրջանին մէջ, – որ ամէնէն աւելի յուզող կէտը կը թուի ըլլալ այսօր, – այլեւ հին օրերու պարագային: Յատկապէս երբ հաշուի առնենք, ինչպէս 1988ին յայտնած է ամերիկահայ հմուտ պատմաբան Ռիչըրտ Յովհաննէսեան, որ «ճշմարտութեան փնտռողները հեշտ չէ, մանաւանդ խորհրդանշաններով եւ առասպելներով ապրող ժողովուրդի մը համար»:

Վերջերս, այլ առիթով, Ռ. Յովհաննէսեան կ'ըսէր. «Հայերը կ'ողբէին պարտուած Վարդանը, որովհետեւ ան մեռաւ իր իտէալներուն համար: Ընդհակառակն, Մեծն Տիգրան հերոս մըն էր՝ որ շահեցաւ իր ճակատամարտները, բայց ան չի յիշուիր, որովհետեւ կռուեցաւ սեփական փառքին համար»:

Արդեօք Մեծն Տիգրան եղած է լոկ փառատենչ թագաւոր մը, որ երեսուն տարի հետապնդած է կայսերական երազ մը: Ռուբէն Մանասէրեանի գրախօսուող հատորը, սակայն, բոլորովին տարբեր պատկեր մը կը պարզէ:

Նախ պէտք է ըսել, թէ Հայոց պատմութիւնը կ'արձանագրէ միայն երեք դէպք, երբ գահակալը դուրս եկած է իր երկրին սահմաններէն: Առաջինը՝ Արգիշտի Ա. եւ Սարգուրի Բ. թագաւորներու ժամանակ, Բ.Ա. 770–735ին, երբ Վանի թագաւորութիւնը հարաւային եւ հարաւարեւմտեան ուղղութիւններով ծաւալեցաւ Հայկական Լեռնաշխարհէն դուրս, ձգտելով ամուր պատուար մը կանգնել Ասորեստանի սպառնալից ներկայութեան դէմ, իր հովանաւորութեան տակ առնելով

մինչեւ իսկ Ասորիքի քաղաքներու համադաշնակցութիւնը: Երկրորդը՝ Մեծն Տիգրանն էր, իսկ երրորդը՝ Կլիդիոյ Լեւոն Ա. Մեծագործ թագաւորը, որ իր արեւելեան սահմանները կ'ընդարձակէր, ծրագրելով Մեծ Հայքը միացնել իր պետութեան:

Ի՞նչու չմտածել, որ Մեծն Տիգրան եւս կրնար մղուած ըլլալ ռազմաքիտական նկատումներէ: Ահա այս աշխատանքին ձեռնարկած է Հեղինակը, որ համակողմանի քննութեան ընդմէջէն՝ կը փորձէ վեր հանել Տիգրան Բ.ի խաղացած մեծ դերը իբրեւ քաղաքագէտ: Եւ զիրքը փակելէ ետք, ընթերցողը կ'ունենայ հայ դիւանագիտութեան պատմութեան մեծագոյն կերպարներէն մէկուն դիմանկարը:

Հակիրճ նախաբանէն եւ աղբիւրագիտական մանրակրկիտ տեսութեանէն՝ կը հասկցուի նման աշխատասիրութեան մը անհրաժեշտութիւնը, երբ շատ մը հարցեր կը մնան չպարզուած, իսկ ուրիշներ՝ երեւութապէս լուսաբանուած, խորքին մէջ տուն տուած են բազմաթիւ թիւրիմացութիւններու:

Մանասէրեանի հիմնական դրոյթը այն է, որ Տիգրան Բ. կանխատեսած էր հռոմէա-պարթեւական մօտայուտ ճակատումը արեւելեան թատերաբեմին վրայ, որուն աքցանին մէջ առաջին բռնուողներէն մէկը պիտի ըլլար Հայաստանը՝ անմիջական կործանումի հեռանկարով, եւ առաջըր առնելու համար այդ վտանգաւոր պահուն, որոշած՝ Մերձաւոր Արեւելքի մէջ քաղաքական ուժեղ միաւոր մը ստեղծել, որ կարողանար հաւասարակշռել երկու հակառակորդներուն ոյժը եւ դէմ դնել անոնց յառաջնադասքին:

Հեղինակը վերադարձած է սկզբնաղբիւրներուն, բարեխիղճ կերպով կարդացած է զանոնք, «մոռցած է» իր նախորդներուն կուտակած նիւթը եւ կառուցած է իր տեսակէտը, այն ատեն միայն «վերլիչելով» պատմաքիտական բերքը: Այսպէս, նորովի մեկնած է շատ մը հարցեր, միաժամանակ նոր լոյս սփռելով հռոմէացի տարբեր հեղինակներու, անտեսուած կամ սխալ ըմբռնուած տեղեկութիւններու վրայ:

Գիրքին արժանիքներէն մէկն է այն մեծ ուշադրութիւնը, զոր Ռ. Մանասէրեան ընծայած է ժամանակաշրջանի միջազգային իրադարձութիւններուն: Արդարեւ, հայ թագաւորին շատ մը քայլերը անհասկնալի կը մնան՝ առանց մօտէն ծանօթանալու արտաքին իրադրութեան:

Առաջին գլուխը կ'անդրադառնայ Հռոմի եւ Պարթեաստանի (Պարթեաստան ձեւը, ըստ մեզի, սխալ է. հմմտ. Պարսկաստան) քաղաքական իրավիճակին եւ ծաւալումի պատճառներուն՝ Ք.Ա. երկրորդ-առաջին դարերուն, եւ Արտաշէսեաններու նորահաստատ պետութեան բռնած դիրքին: Ինչպէս յայտնի է, Հայաստանի վերաբերող նիւթերը համեմատաբար քիչ են ու ժլատ, ինչ որ ցարդ թոյլ չէ տուած Ք.Ա. 160-95 ժամանակաշրջանի ճշգրիտ պատկերացումը:

Երկրորդ գլուխը կը զբաղի Տիգրանի առաջին քայլերով, Հայաստանի վերադառնալէ ետք: Հոս արդէն ակնյայտ է, որ Հայ թագաւորը ո'չ թէ Միհրդատ Եւպատորի տեսակ մը կամակատարն է, «սեւ աշխատանք»ը ընողը, այլեւ սեփական ծրագիր մը ունի եւ անոր գործադրութեան հետամուտ է: Հեղինակը ցոյց կու տայ, որ Կապադովկիոյ դահակալական կռիւին մէջ Տիգրան աշխատած է ըստ կարելոյն՝ ապահովել իր արեւմտեան սահմանը ընդդէմ Հռոմի, մինչեւ իսկ հռոմէացիներու դէմ մարտի ելլելու եւ պարտուելու գնով: Հռոմի եւ Պարթեւաստանի միջեւ յետագայ բանակցութիւնները (Ք.Ա. 92), ուր քրննարկուած է Հայաստանի դէմ համատեղ պատերազմի կարելիութիւնը, պէտք է աւելի եւս ամրապնդէր Տիգրանի քաղաքական ծրագիրը: Պարտութիւնը եւ հակահայ պայմանագրի սպառնալիքը հարկադրեցին Տիգրանը փոխելու իր կապադովկիական քաղաքականութիւնը, հակահռոմէական պայքարէն առժամաբար հրաժարիլ, զայն Պոնտոսին ձգելով, եւ ուժերը կեդրոնացնել Պարթեւաստանի դէմ:

Կացութիւնը Տիգրանի ի նպաստ դասակարգեցաւ. պարթեւական ներքին տառնապը թոյլ տուաւ իրեն յարձակողականի անցնիլ եւ փայլուն յաղթանակ մը տանիլ, որուն օգտակար եղաւ, անուղակիօրէն, Հռոմի եւ Պոնտոսի պատերազմը (88-84):

Տիգրան տեսակ մը «առողջապահական գօտի» ստեղծեց Հայաստանի հարաւը, գրաւելով Ատրպատականը, Կորդուքը, Օսրէնէն, Արդիաքենը, Կոմմագենէն եւ Միգդոնիան, թէեւ ո'չ փառքի սիրոյն: Այդ հողամասերը յենակէտն էին, որուն վրայ 83 թուականին Տիգրան պիտի ձեռնարկէր իր ծրագրի պսակումին, հայաստրական միացեալ պետութեան ստեղծումով: Մանասէրեան համոզիչ կերպով կ'ապացուցանէ, որ միացումը տեղի ունեցաւ Ասորիքի քաղաքներու եւ ո'չ՝ Տիգրանի կամքով: Անոնք գերադասեցին Հայոց թագաւորը, անկումի եզրին գտնուող եւ արդէն վնասաբեր դարձած Սելեւկեաններու փոխարէն: Քաղաքական այս արարքը, որ հնադարուն նախընթաց չունէր, Տիգրանի պետութիւնը կը վերածէր երկմիասնական, որոշ չափով իրաւահաւասար երկու անդամներու մարմնի մը: Հայ թագաւորը, Փիւնիկէն ու Դաշտային Կիլիկիան ենթարկելէ ետք՝ կանգ առաւ:

Երրորդ գլխուն մէջ, բացատրելէ ետք այս միութեան տուն տուող պատճառները, հեղինակը կ'անդրադառնայ Ասորիքի ընկերա-տնտեսական վիճակին, Տիգրանի վարած քաղաքականութեան եւ Սելեւկեաններու վերջին բեկորներու ապստամբութեան ընդդէմ Հայ թագաւորին (74-71), որ կը զուգադիպէր Հայաստանի մէջ իր որդի Զարեհի եւ աւագանիի մէկ մասին խռովութեան:

Այս դէպքերու մեկնաբանութիւնը իբր հիմք կը ծառայէ չորրորդ գլխուն համար ու կը հասկցուի, որ Տիգրանի չէզոքութիւնը 73-71 թուականներու հռոմէա-պոնտական պատերազմին եւ իբրեւ թէ

«խաղաղասիրական» քաղաքականութիւնը Հոռմի հանդէպ՝ պայմանաւորուած էին վերը նշուած գործօններով, որոնք վտանգաւոր էին իր նորաստեղծ պետութեան համար, մանաւանդ որ Հոռմը, Անտիոքոս Սելեւկեանի միջոցով, արդէն ոտք դրած էր Ասորիքի մէջ:

Ժամացոյցի դէմ մրցավազքին մէջ յաղթական ելաւ Լուկուլլոսը, որ սկսաւ պատերազմը: Մանասէրեան կը պարզէ հանգամանքները եւ ցոյց կու տայ թէ ի՞նչ աղէտալի հետեւանքներ ունեցաւ Տիգրանակերտի ճակատամարտը Տիգրանի պետութեան ճակատազրին համար:

Թէեւ Արածանիի յաղթանակը եւ Ապպիանոսի տուեալներու զննումէն հեղինակի կողմէ յայտնաբերուած երրորդ կռիւլ՝ Լուկուլլոսի նահանջի ճամբուն վրայ փրկեցին բուն Հայաստանը, սակայն Հայաստան-Ասորիք պետութիւնը անվերականգնելի էր եւ այդ փորձին ձեռնարկելը միայն կրնար վտանգել Հայոց երկրի գոյութիւնը:

Վեցերորդ գլուխը կը նկարագրէ Միհրդատի վերջնական ջախջախումը եւ Հայաստանի ինքնուրոյնութեան վերջնական ապահովումը, շնորհիւ Տիգրանի դիւանագիտական ճարտարութեան: Եւ ընթերցողի աչքին առջեւ կը գոցուի վարագոյրը, զուգահեռ վրայ տեսնելով 94-86 թուականներուն Միհրդատի եւ Տիգրանի քաղաքական վարքագիծը: Այստեղ է, կը կարծենք, Մանասէրեանի խորաթափանց աշխատանքին շնորհիւ, որ Ռոնէի կրուսէի այն իմաստալից ասոյթը, թէ «... Միհրդատ փայլուն կերպով, ինքնասպանութեան տարաւ իր երկիրը, մինչդեռ Տիգրանը ապահովեց իր ժողովուրդին յաւիտենական գոյատեւումը», կը գտնէ իր իսկական տարողութիւնը:

Այս յոյժ հետաքրքրական հատորը, թէեւ մասնագիտական բնոյթի, մատչելի է սովորական ընթերցողին, շնորհիւ հեղինակի դիւրասահ ու կենսունակ ոճին: Նկատելի է, սակայն, լեզուական կարգ մը անհարթութիւններու յաճախ անհարկի ներկայութիւնը: Յատուկ անձնանուններու ցանկ մը անհրաժեշտ էր նաեւ:

Ռ. Մանասէրեանի մատենագիտական համապարփակ ատաղձէն վրիպած են Հայկ Յակոբեանի «Տիգրանակերտի ճակատամարտը նոր լուսաբանութեամբ» յօդուածը («Լրաբեր հասարակական գիտութիւնների», ռուսերէն, թիւ 9, 1983), եւ Պերճ Սապպաղեանի «Դրամագիտական հարցեր» հատորը (Պէյրութ, 1986), որոնք Տիգրանակերտի ճակատամարտի վերաբերեալ կարեւոր հարցադրումներ կը բովանդակեն (Սապպաղեանի ուսումնասիրութիւնը առաջին անգամ լոյս տեսած է 1970ական թուականներուն՝ Պէյրութի «Հայկազեան Հայագիտական Հանդէս»-ին մէջ):

Նկատի ունենալով այս արժէքաւոր աշխատութեան կարեւորութիւնը, թելադրելի է անոր հրատարակութիւնը անգլերէն կամ ֆրանսերէն լեզուներով: